«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

_____ Մ.Գ.Մանուչարյան
16 հունվարի 2025թ.

ԿԱՐԾԻՔ
ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Համլետ Գրիգորի Մկրտչյանի «ՀՀ տնտեսական զարգացման առաջնահերթությունները համաշխարհային տնտեսության մարտահրավերների համատեքստում» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.06 «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Մասնակցում էին՝ Մերի Մանուչարյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ,* Լիանա Խաչատրյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ,* Եվգենյա Հակոբյան՝ *տնտեսագիտ. թեկնածու,* Ռոբերտ Սարինյան՝ *տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ.,* Բելլա Գաբրիելյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ,* Գևորգ Հարությունյան՝ *տնտեսագիտ. թեկնածու,* Գրիգոր Մանուկյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ,* Շողեր Պողոսյան՝ *տնտեսագիտ. թեկնածու,* Ստեփան Պապիկյան՝ *տեխ.գիտ.թեկնածու,* Հովհաննես Ասատրյան՝ *տնտեսագիտ. թեկնածու:*

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Երկիր մոլորակի գրեթե յուրաքանչյուր պետության համար տնտեսական մարտահրավերներին, արտաքին շոկերին դիմակայելը մղվել է առաջին պլան: Արտաքին շոկերի ազդեցության մեղմացումը, և, միևնույն ժամանակ, հատկապես փոքր տնտեսություն, ներքին նեղ շուկա ունեցող երկրների պարագայում, կարևոր նշանակություն է ստանում տնտեսության արտահանելի հատվածի միջոցով՝ շուկաների և ապրանքների դիվերսիֆիկացման ուղիով տնտեսական աճի ապահովումը:

Հաշվի առնելով համաշխարհային տնտեսության, երկրների միջև տնտեսական հարաբերությունների զարգացման ներկայիս միտումները, որոնք բնութագրվում են

պետությունների միջև հարաբերությունների երկիմաստությամբ, կոնֆլիկտային ներուժի աճով, առևտրային պատերազմների նախադեպերով, պատժամիջոցների խախտումներով, ի վերջո, կարելի է եզրակացնել, որ չնայած միջազգային առևտրին մասնակցելու մեծաթիվ առավելություններին՝ պետության տնտեսական անվտանգության համար կան նաև զգալի սպառնալիքներ: ՀՀ տնտեսության վրա տնտեսական շոկերի ազդեցության գնահատումը, արտաքին շոկերի փոխանցման ուղիների, տնտեսության խոցելիության, ըստ առաջնային ոլորտների արտահանման և ներմուծման մրցակցային առավելությունների բացահայտումը՝ արտաքին շոկերի դիվերսիֆիկացման և համաշխարհային մարտահրավերներին, սպառնալիքներին դիմակայելու տեսանկյունից ունի կենսական նշանակություն, ինչով էլ պայմանավորված է սույն ատենախոսության հրատապությունն ու արդիականությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության հիմնական նպատակը համաշխարհային մարտահրավերների նկատմամբ ՀՀ տնտեսության խոցելիության և դրանց ազդեցության վերլուծության արդյունքում ՀՀ տնտեսական զարգացման առաջնահերթությունների ձևակերպումն է՝ ՀՀ տնտեսական աճի տեսանկյունից էական նշանակություն ունեցող ոլորտների կտրվածքով: Նշված նպատակին հասնելու համար ատենախոսության շրջանակներում սահմանվել են հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել և վերհանել ժամանակակից համաշխարհային տնտեսության մարտահրավերները, առանձին ազգային տնտեսությունների խոցելիությունը կանխատեսող ցուցանիշները և զարգացման առաջնահերթությունները, ինչպես նաև էմպիրիկ գնահատականների հիման վրա պարզաբանել ՀՀ տնտեսության վրա արտաքին շոկերի ազդեցության փոխանցման հիմնական ուղիները,
- ուսումնասիրել և քննական վերլուծության հիման վրա բացահայտել ներմուծման, արտահանման, ինչպես նաև հանքարդյունաբերության ու զբոսաշրջության ոլորտների աճի հիման վրա պայմանավորված տնտեսական աճի հիփոթեզների վավերականությունը (այլ երկրների օրինակով),
- պարզաբանել ՀՀ մրցակցային առավելությունները՝ արտահանվող ապրանքախմբերի քարտեզավորման և մի շարք ինդեքսների հաշվարկման հիման վրա, մատնանշել առկա մարտահրավերները և արտահանման դիվերսիֆիկացման հնարավորությունները, ,

- ուսումնասիրել համաշխարհային զարգացումների ազդեցությունը ՀՀ զբոսաշրջության ոլորտի վրա, բացահայտել վերջինիս խոցելիությունը և դերը տնտեսության մեջ, ինչպես նաև տնտեսաչափական գնահատման արդյունքում որոշակիացնել ոլորտի զարգացման առաջնահերթությունները,
- բացահայտել համշախարհային զարգացումների ազդեցությունը ՀՀ մետաղական հանքաքարի արդյունահանման, ինչպես նաև ոլորտի խոցելիության վրա,
- գնահատել ներմուծման և զբոսաշրջության՝ որպես ՀՀ տնտեսական աճի ապահովման գործոնների դերը և զարգացման առաջնահերթությունները,
- գնահատել մետաղական հանքաքարի արդյունահանման դերը ՀՀ տնտեսական աճի ապահովման գործում, տնտեսաչափական գնահատման արդյունքում որոշակիացնել ոլորտի զարգացման, այդ թվում ներդրումային միջավայրի առաջնահերթությունները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության շրջանակներում իրականացված ուսումնասիրության հիման վրա ստացվել են տեսական, մեթոդական և գործնական նշանակություն ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից գիտական նորույթն արտացոլող հիմնական դրույթներն են.

- ՀՀ–ից արտահանվող ապրանքախմբերի քարտեզավորման և մի շարք ինդեքսների հաշվարկների հիման վրա բացահայտվել են մրցակցային առավելություն ունեցող ապրանքային խմբերը և որոշակիացվել են տնտեսության, արտաքին շուկաների և արտահանման բազմազանեցման (դիվերսիֆիկացման) մոտեցումները:
- Տնտեսաչափական մոդելների միջոցով գնահատվել է մի շարք գործոնների՝ ներմուծման, արտահանման, տնային տնտեսությունների կողմից վերջնական սպառման վրա ուղղվող ծախսերի դերը ՀՀ տնտեսական աճի ապահովման վրա:
- Տնտեսաչափական գործիքակազմի կիրառմամբ գնահատվել է ՀՀ զբոսաշրջության ոլորտի նպաստումը տնտեսական աճին, բացահայտվել է արտաքին շոկերի նկատմամբ ոլորտի խոցելիությունը:
- Հանքագործական արդյունաբերության հարկմանն առնչվող օրենսդրական փոփոխությունների ազդեցության վերլուծության և տնտեսաչափական գնահատման արդյունքում բացահայտվել է մետաղական հանքաքարի արդյունահանման ոլորտը ներկայացնող

ընկերությունների դերը ՀՀ տնտեսական աճի ապահովման գործում, մատնանշվել են մարտահրավերները և առաջարկվել են ոլորտի զարգացման հնարավոր միջոցառումները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ***ներածությունում*** հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակներն ու խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, տեսամեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ստացված արդյունքները և նորույթները, արդյունքների գիտագործնական նշանակությունը, հետազոտության շրջանակներում կատարված հրապարակումները, ինչպես նաև հետազոտության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ ***«Արտաքին շոկերը որպես տնտեսության զարգացման մարտահրավերներ և տնտեսական աճի հնարավորություն»*** գլխում ներկայացվել են վերջին ժամանակաշրջանի տնտեսական արտաքին մարտահրավերները, տնտեսության խոցելիությունը կանխատեսող ցուցանիշները:

Ատենախոսության երկրորդ՝ ***«Համաշխարհային զարգացումները, ՀՀ տնտեսության խոցելիությունը և հնարավորությունները՝ ըստ առաջնահերթ ոլորտների»*** գլխում հեղինակն ուսումնասիրել է ՀՀ մրցակցային առավելություններ ունեցող ապրանքային խմբերը, իրականացրել է արտահանվող ապրանքախմբերի քարտեզավորում, ինչպես նաև ուսումնասիրել է արտաքին մարտահրավերների ազդեցությունը ՀՀ զբոսաշրջության ոլորտի և մետաղական հանքաքարի արդյունահանման ընկերությունների վրա:

Ատենախոսության երրորդ՝ «***ՀՀ արտաքին տնտեսական կապերի առաջնահերթությունները***» գլխում ներկայացվել է ներմուծման և զբոսաշրջության, ինչպես նաև մետաղական հանքաքարի արդյունահանման դերը ՀՀ տնտեսական աճի ապահովման գործում, նախանշվել են նաև ոլորտային առաջնահերթությունները:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս կատարելու եզրահանգումներ և առաջարկություններ, որոնք ամփոփված են ատենախոսության ***«Եզրակացություններ և առաջարկություններ»*** բաժնում:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ինչպես ցանկացած գիտական աշխատանք, սույն ատենախոսությունը ևս զերծ չէ որոշակի թերություններից, որոնցից կարևորել ենք հետևյալները.

1. Ատենախոսը որպես աշխատանքի նպատակ սահմանել է «ՀՀ տնտեսական զարգացման առաջնահերթությունների ձևակերպումը՝ տնտեսական աճի տեսանկյունից էական նշանակություն ունեցող ոլորտների կտրվածքով: Այդ ոլորտները ատենախոսությունում վերցվել են հանքարդյունաբերությունը և տուրիզմը: Սակայն կատարված գնահատումների արդյունքում նույն ինքը ատենախոսը պնդում է, որ հանքարդյունաբերության ոլորտը գնահատվող ժամանակահատվածներից որոշներում ոչ միայն չի նպաստել ՀՀ իրական ՀՆԱ-աճին, այլ նաև բացասական վիճակագրորեն նշանակալի կապի մեջ է եղել ՀՆԱ-ի աճի հետ: Բացի այդ քննարկվող առաջնահերթությունները այդպես էլ համապարփակ տեսքով ատենախոսությունում չեն ներկայացվում, որի արդյունքում գոնե հասկանալի կլիներ, թե կատարված հարուստ ու բազմակողմանի գնահատումների արդյունքում ատենախոսը ի՞նչ գիտական արդյունքի է հանգել:
2. Ատենախոսը աշխատանքում ձևակերպել է չորս գիտական նորույթներ, որից երեքը զուտ ՀՀ տնտեսական աճի վրա հանքարդյուանբերության, զբոսաշրջության և ներմուծման ոլորտների էկոնոմետրիկ գնահատումներն են: Էկոնոմետրիկ մեթոդների կիրառումը դեռևս իրենից գիտական նորույթ չի ենթադրում, առավել ևս, որ կիրառվող մեթոդը ամենատարածված ու կիրառական OLS մեթոդն է, սահող միջինների, MA(1) պրոցեսների ներգրավմամբ: Պատկերը այլ կլիներ, եթե նոր, մոդիֆիկացված, նախկինում չկիրառված էկոնոմետրիկ մեթոդ կամ մոդել կիրառվեր ատենախոսությունում, ընդ որում ստացված արդյունքներին էլ կտրվեր կիրառականություն, կամ օրինակ ստացված արդյունքների հիման վրա կոնկրետ, կիրառական առաջարկություններ կներկայացվեին ատենախոսությունում:
3. Աշխատանքում առկա են մտքի սխալ ձևակերպումներ, հղում՝ գոյություն չունեցող աղյուսակին, անհասկանալի և առանց հիմնավորման արտահայտություններ, մասնավորապես՝ աշխատանքի 1 . 1 ենթագլուխը վերնագրված է « ...ցուցանիշների քննական վերլուծություն», ինչ նկատի ունի ատենախոսը՝ քննական վերլուծություն ասելով, էջ 21-ում, երկրորդ պարբերությունում ատենախոսը հղում է արել աղյուսակ 1 . 2 . 1-ին, որը աշխատանքում բացակայում է, ուստի անհնար է նաև ստուգել՝ արդյոք ներկայացված դատողությունները հավաստի են, թե ոչ, էջ 32-ի երկրորդ պարբերությունում նշում է «Պերուում առկա է երկարաժամկետ կապ պղնձի

միջազգային իրական գների և արտահանման ծավալների մեջ...», ի՞նչ ասել է թե «երկարաժամկետ կապ», էջ 55-ում նշում է հետևյալ միտքը, որը բոլորովին չի հասկացվում և չի ընկալվում վերջինիս տնտեսագիտական իմաստը, մեջբերում. «Հետևաբար կարճաժամկետ-միջնաժամկետ հատվածում ՀՀ կառավարության գործունեության առաջնայնությունը պետք էլինի արտահանման ծավալների աճի ապահովումը՝ նախքան շոկի արձանագրումը, որի արդյունքում հարկային եկամուտների աճին զուգահեռ պետք է նվազեցվի հատկապես արտաքին պետական պարտքի մակարդակը, և բյուջեի պակասուրդն իջեցվի հնարավորինս ցածր մակարդակի վրա: Ինչպես նաև, եթե ՌԴ-ում արձանագրվի տնտեսական անկում, ապա ՀՀ կառավարությունը կարողանա հակաճգնաժամային միջոցառումների միջոցով մեղմել այդ ազդեցությունը՝ պետական պարտքի և, մասնավորապես, արտաքին պետական պարտքի ծավալների աճի միջոցով», աշխատանքի 55 էջում ատենախոսը նշում է հետևյալ միտքը, մեջբերում. «որ, եթե ՀՀ-ն կարողանա անդամակցել ԵՄ-ին, ապա կկարողանա լայն սպառման համար չնախատեսված ապրանքներ արտադրել ու ծառայություններ մատուցել, և լայն սպառման ծառայությունների կտրվածքով կարող է մրցակցել Հնդկաստանի հետ: Ինչ նկատի ունի ատենախոսը Հնդկաստանի հետ մրցակցության մասով՞ ինչու է հենց լայն սպառման ծառայությունների մասով ՀՀ-ն կարող մրցակցել Հնդկաստանի հետ, որո՞նք են այդ լայն սպառման ծառայությունները, 62 էջում ներկայացված է 30-40% անկում, բայց հղում արված չէ թե որտեղից այդ ցուցանիշը, կամ հեղինակի սեփական գնահատումն է և այլն:

4. Աշխատանքի 2 . 1 ենթագլուխը վերաբերվում է ՀՀ մրցակցային առավելություններին, արտահանվող ապրանքների քարտեզավորմանը, դիվերսիֆիկացման հնարավորություններին, սակայն ենթագլխում ստացված արդյունքները աշխատանքի վերջում ներկայացված առաջարկություններում այդպես էլ չեն կիրառվում: Ներկայացված ութ առաջարկություններից միայն առաջինում է ներկայացված ընդհանրական միտք, որ ՀՀ տնտեսական աճը պիտի հիմնվի արտահանման դիվերսիֆիկացման վրա, և կատարված լայնածավալ ուսումնասիրությունը ամփոփվում է այդքանով:
5. Աշխատանքի 59 էջի առաջին պարբերությունում ատենախոսը հիմք ընդունելով զբոսաշրջիկների կատարած ծախսեր և ՀՆԱ հարաբերակցությունը, նշում է. «միտումները փաստում են այն մասին, որ զբոսաշրջությունը արդեն դարձել է, և ՀՀ տնտեսության համար միջնաժամկետ հատվածում կարող է դառնալ տնտեսական աճի ապահովման կարևոր գործոն՝ զբոսաշրջիկների թվի ավելացման դեպքում:» Կրկին անհասկանալի ու հակասական դատողություն,

որը ավելի շատ հարցերի տեղիք է տալիս, քան բացատրում է աղյուսակի արդյունքները:

6. Աշխատանքում առկա են տերմինների ու բացատրական արտահայտությունների օգտագործման խնդիրներ, օրինակ աշխատանքում բազմիցս ատենախոսը նշում է դրամը ամրապնդվի ռուբլու, կամ ԱՄՆ դոլարի նկատմամբ (էջեր 63, 67, 72), կամ էկոնոմետրիկ մոդելների բացատրություններում անկախ փոփոխականի ազդեցությունը կախյալ փոփոխականի վրա բացատրելիս մեկ կիրառվում է կազդեր, կփոխեր, կարող էր ակնկալվել, կարող էր հանգեցնել, միջինում կարող էր հանգեցնել ու նմանատիպ, ոճապես տարբեր ու ոչ ճիշտ արտահայտություններ:
7. Ատենախոսությունում շարունակ օգտագործվում է կարճաժամկետում, միջնաժամկետում և երկարաժամկետում ժամանակային սահմանները, վերջիններիս անհարկի օգտագործումը լրացուցիչ հարցերի տեղիք է տալիս, ու շատ դեպքերում դատողությունների ճշմարտացիությունը հարցականի տակ է դնում: Չի հասկացվում, թե օրինակ տվյալ գիտական մտքում, երբ ատենախոսը օգտագործում է միջնաժամկետ բառը, դա գնահատման արդյունք է, հինավորված է՞ թե զուտ օգտագործվում է այնքանով որքանով:
8. Աշխատանքի էջ 113-ում ներկայացված 3.3.4 էկոնոմետրիկ մոդելում միայն պղնձի խտահանքի իրական արտահանում փոփոխականը ներառված է t-4 լագային արժեքով: Սակայն պատճառաբանված չէ ինչու՞:
9. Աշխատանքի 3.1 ենթագլխում ներկայացված են էկոնոմետրիկ մոդելներ: 3.1.3 և 3.1.4 մոդելների առաջին երեք գնահատումները զետեղվել են աղյուսակ 3.1.1-ում, որի արդյունքները վերլուծվել են ու ներկայացված են ատենախոսությունում: Սակայն աշխատանքի 91 էջում ատենախոսը նշում է, մեջբերում «որ ավտոկոռելյացիայի խնդրի բացահայտման դեպքում կիրառվել է սահող միջինի MA(1) առաջին կարգի պրոցեսը՝ խնդրի վերացման նպատակով:» Արդյունքում կառուցել է նոր մոդելներ ու ներկայացրել դրանք աղյուսակ 3.1.2-ում: Ավտոկոռելյացիայի խնդրի առկայությունը արդեն իսկ բացառում է առաջին երեք գնահատումների հավաստիությունը, հետևաբար ատենախոսը կոպիտ սխալ է թույլ տվել դրա արդյունքները ատենախոսությունում ներառելով:
10. Աշխատանքի 3.2 ենթագլխում ատենախոսը կատարել է զբոսաշրջության ոլորտին վերաբերվող էկոնոմետրիկ գնահատում, որտեղ մոդելներից մեկում գնահատվել է զբոսաշրջիկների կողմից կատարվող ծախսերի վրա ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվաքանակի և ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի միջին փոխարժեքի ազդեցությունը: Ի՞նչու մոդելում հաշվի չեն առնվել այլ գործոններ, օրինակ ՀՀ-ում զբոսաշրջային ծառայությունների սակագները, կամ սպառողական ապրանքների գների մակարդակների փոփոխությունը, չէ որ

զբոսաշրջիկների կողմից ՀՀ-ում կատարվող ծախսերի մեծությունը ուղղակիորեն կախված է ՀՀ-ում ապրանք-ծառայությունների գների ու սակագների փոփոխություններից: Ավելին նշված գործոնները կարող էին դիտարկվել, որպես ներքին տնտեսական գործոններ, իսկ ատենախոսի կողմից ընտրված գործոնները որպես արտաքին տնտեսական գործոններ, ու ավելի բովանդակալից արդյունքներ կստացվեին դրանց ազդեցության բնույթի ու առաջնայնության մասով, ու ավելի հեշտ կլիներ նախանշել ՀՀ-ի համար, ոլորտի հետագա զարգացման ուղղությունները:

11. Ատենախոսությունը առավել կշահեր, եթե աշխատանքում նաև ուսումնասիրվեին վերնագրում մատնանշվող տնտեսական մարտահրավերներով պայմանավորված (COVID-19, 44-օրյա պատերազմ, Ռուս-Ուկրաինական հակամարտություն) միգրացիոն զարգացումները ՀՀ-ում և դրա հնարավոր տնտեսական հետևանքները՝ ՀՀ տնտեսական զարգացման համատեքստում:
12. Աշխատանքի 131 էջում զետեղված առաջարկություններից թվով երրորդը բնույթով առավելապես դատողություն է հիշեցնում, քան առաջարկ, ընդ որում չհիմնավորված:
13. Աշխատանքի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ առաջարկությունները ՀՀ տնտեսական զարգացման համար կարևորում են դիվերսիֆիկացիան, մի կողմից արտահանման, մի կողմից տնտեսության և այլն: Ըստ էության այս առաջարկությունները բնույթով խիստ տեսական են և ընդհանրական, չեն արտահայտում որևէ կոնկրետ մոտեցում: Արտահանման դիվերսիֆիկացիայի մասին խոսելիս ատենախոսը կարող էր օգտագործել իր կողմից ստացված հարուստ հետազոտական նյութը՝ ՀՀ մրցակցային առավելությունների ու ապրանքների քարտեզագրման մասով և կարող էր օրինակ կոնկրետ ապրանքների մասով ներկայացնել արտահանման խթանման սցենարներ: Զուտ առաջարկել «դիվերսիֆիկացնել ՀՀ տնտեսությունը և արտահանման ուղղությունները» հարիր չէ թեկնածուական ատենախոսությանը և իր բնույթով էլ նորույթ չէ ՀՀ տնտեսության համար:
14. Աշխատանքի թվով 6-րդ առաջարկությունում հեղինակը կարևորում է 2-աստղանի հյուրանոցների, մատչելի կացարանատների առկայությունը՝ միջնաժամկետում ՀՀ-ում դրամի արժևորման պարագայում զբոսաշրջիկների թվի անկումը կանխելու նպատակով: Ինչն է դրված տվյալ առաջարկության հիմքում՝ արտասահմանյան փորձը՝ թե օրինակ ՀՀ-ում առաջնային հետազոտության արդյունքում ձեռք բերված առաջնային ինֆորմացիան (հարցումներ, սոցիոլոգիական հետազոտություններ և այլն): Ատենախոսը այս առաջակությամբ անդրադարձ է կատարում ՀՀ-ում զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման անհրաժեշտությանը, որը ավաղ պարտադիր չէ կապել Դրամի արժևորման հետ: Անկախ երկրի դրամական

համակարգում գրանցվող զարգացումներից, զբոսաշրջության զարգացման գործում կարևոր նախապայման է երկրում զարգացած զբոսաշրջային ծառայությունների ու ենթակառուցվածքների առկայությունը:

15. Աշխատանքի 7-րդ առաջարկությունում ատենախոսը առաջարկում է, որ ՀՀ Կառավարությունը բյուջեում նախատեսի աջակցություն զբոսաշրջության ոլորտի համար: Գաղտնիք չէ, որ ներկայումս ՀՀ-ում Ծառայությունների ոլորտը ամենամեծ ՀՆԱ մասնաբաժինն ունի և աճ է գրանցում, արդյոք իրատեսական է առանց այն էլ շահեկան դիրքերում գտնվող տնտեսության ճյուղի կազմակերպությունների համար լրացուցիչ պետական օժանդակություն նախատեսելը, երբ ՀՀ-ի համար առավել ռազմավարական նշանակություն ունի տնտեսության իրական հատվածի զարգացումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր առմամբ ատենախոսությունը հարուստ է գիտական վերլուծություններով և կատարված են համակողմանի խորը վերլուծություններ, սակայն վերջինս առավելապես թողնում է վերլուծական աշխատանքի տպավորություն, որի արդյունքները չեն արտացոլվում կիրառական կոնկրետ առաջարկություններում:

Համլետ Գրիգորի Մկրտչյանի «ՀՀ տնտեսական զարգացման առաջնահերթությունները համաշխարհային տնտեսության մարտահրավերների համատեքստում» թեմայով ատենախոսությունը կարելի է որակել որպես ինքնուրույն հետազոտություն, որն ուղղված է համաշխարհային տնտեսության մարտահրավերների համատեքստում ՀՀ տնտեսական առաջնահերթությունների բացահայտմանը:

Ատենախոսության արդյունքները կարող են կիրառվել ՀՀ կառավարության կողմից ռազմավարական ծրագրերի մշակման համար, ՀՀ էկոնոմիկայի նախարարության տնտեսական քաղաքականության և ՀՀ Անվտանգության խորհրդի ռազմավարական նոր մոտեցումների մշակման և ներդրման, ինչպես նաև տնտեսաչափական գործիքակազմով ստացված քանակական գնահատականների, հեղինակի կողմից նախանշված սցենարային վերլուծությունների արդյունքների և որակական գնահատումների հիման վրա ոլորտային պետական մարմինների որոշումների կայացման համար:

Թեկնածուական ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական բովանդակությունը, արդյունքները և գիտական նորույթը: Հեղինակի կողմից հրապարակած 5 (հինգ) գիտական հոդվածները համապատասխանում են

հետազոտության ուղղվածությանը, դրա խնդիրներին և ունեն բավարար ընդգրկունություն:

Համլետ Գրիգորի Մկրտչյանի «ՀՀ տնտեսական զարգացման առաջնահերթությունները համաշխարհային տնտեսության մարտահրավերների համատեքստում» թեմայով ատենախոսությունը և դրան համատեղ կազմված սեղմագիրն ու թվով 5 (հինգ) հոդվածների հրապարակումները համապատասխանում են ՀՀ–ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ աշխատանքի հեղինակը՝ խորհրդում բարեհաջող պաշտպանության դեպքում արժանի է Ը.00.06 «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտության գծով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, «Ատենախոսությունների քննարկման և կարծիքների ներկայացման» հանձնաժողովի նիստում (16.01.2025թ., արձանագրություն թիվ 3):

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ
ավագ գիտաշխատող,
տնտեսագիտության թեկնածու **Շ.Պ.Պողոսյան**

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ
գիտաշխատող,
տնտեսագիտության թեկնածու **Հ.Ս.Ասատրյան**

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի ՏԻ ավագ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու Շ.Պողոսյանի և նույն ինստիտուտի գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու Հ.Ասատրյանի ստորագրությունների իսկությունը «հաստատում եմ»՝

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ
գիտ. քարտուղար,
տնտեսագիտության թեկնածու **Ե.Ա. Հակոբյան**
«16» հունվարի, 2025թ.
Կ.Տ.